Կ. ՊՈԼՍՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՑ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Հուլիսի 11-12-ը Կ. Պոլսում տեղի ունեցավ Թուրքիո Հայոց պատրիարքության աջակցությամբ և Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի եռանդուն ջանքերով կազմակերպված գիտաժողով՝ նվիրված Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկին՝ Քրիստոսի Պայծառակերպությանը (Վարդավառ):

Գիտաժողովին մասնակցում էին 22 հայ և օտարազգի գիտնականներ: Հայաստանից ներկա էր ութ գիտնականներից բաղկացած մի պատվիրակություն՝ Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի պրոֆեսոր Պարույր Մուրադյանի գլխավորությամբ:

Գիտաժողովի մասնակիցներին իր ուղերձն էր հղել Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի ընթերցումով էլ բացվեց գիտաժողովը: Ընթերցվեց նաև Թուրքիո Հայոց Պատրիարք Գարեգին արքեպս. Գազանճյանի ողջույնի խոսքը:

Գիտաժողովի ընթացքում եղույթ ունեցող գիտնականները իրենց զեկույցներում անդրադարձել էին Վարդավառի տոնի ձևավորմանը՝ սկսած հեթանոսական վաղ շրջանից, նրա զարգացման ընթացքին, հոգևոր կյանքի և մտածելակերպի վրա թողած ազդեցությանը, հայկական մանրանկարչության մեջ Պայծառակերպության թեմայի դրսևորումներին: Բոլոր զեկուցումներն էլ աչքի էին ընկնում աստվածաբանական խոր վերլուծություններով, գիտական բարձր մակարդակով:

Հուլիսի 14-ին գիտաժողովի մասնակիցները ներկա եղան Ուշկաղարի Ս. Հովհաննես Մկրտիչ և Գնալի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներում Պայծառակերպության տոնի առթիվ մատուցված Ս. Պատարագին: Արարողություններից հետո նրանք ծանոթացան նաև քաղաքի տեսարժան վայրերին: